ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Նարինե Խաչատրյան

Անձի հոգեբանության առարկայի սահմանման խնդիրը

Անձի հոգեբանության ձևավորումը նոր մարտահրավեր նետեց ընդհանուր հոգեբանությանը՝ ցույց տալով, որ առանց հոգեկանի կրողի, սուբյեկտի՝ մենք գործ ունենք անդեմ հոգեբանության հետ: Ինչպես նշում են Կ. Հոլը և Գ. Լինսդեյը, անձի տեսությունը ժամանակին դիտարկվում էր որպես «այլակարծություն» [4], քանի որ հոգեբանական տարբեր իրողությունների ուսումնասիրման համար առաջ էր քաշվում «անհատական չափման» կարևորությունը:

Անձի տեսությունը ձևավորվել է մեծ մասամբ մարդու կենսագործունեության առօրեական խնդիրներից, ինչպես, օրինակ՝ սոցիալական միջավայրին հարմարում, կյանքի պահանջներին համապատասխան արդյունավետ վարքի դրսևորում, անձի հոգեկան առողջության խնդիրներ և այլն: Անձի հոգեբանական տեսություններում բարձրացվել են ինչպես հիմնարար, այնպես էլ ավելի նեղ՝ կիրառական բնույթի հարցեր: Ընդ որում, անձի տեսության զարգացումը ցույց է տալիս, որ այն շարժվում է մակրոտեսություններից (grand theories) դեպի միջին մակարդակի տեսություններ: Եթե մակրոտեսությունները հավակնում էին բացատրել ամբողջական անձի ակտիվության աղբյուրները՝ հիմնականում հիմնվելով առանձին դեպքերի, կլինիկական փորձառության և հենց իրենց՝ գիտնականների անհատական կյանքի, ինչպես նաև փիլիսոփայության, գրականության և առողջ բանականության վրա, ապա միջին մակարդակի տեսություններում շեշտը դրվում է այս կամ այն հարաբերություններում, պայմաններում անձի վարքային դրսևորման սիստեմատիկ դիտման վրա՝ մշակելով վերջինիս համար հստակ հուսալի և վալիդ մեթոդ [10]: Անձի բազմազան տեսությունների զարգացումը և դրանց կիրառական նշանակության հիմնավորումները ցույց են տալիս, որ անձի հոգեբանությունը կարելի է համարել այն մեկնակետը, որից պետք է կառուցել հոգեբանական ֆենոմենների նոր ընկալումը՝ *անձնակենտրոն* հոգեբանության տեսանկյունից:

Իսկ ի՞նչ է կամ ո՞րն է այդ անհատական չափումը: Այն հարցում, որ այդ «անհատականը» պայմանավորող դեր ունի մարդու վարքում,

համաձայնություն կա անձի գրեթե բոլոր տեսություններում, սակայն մյուս՝ տրամաբանորեն հաջորդող հարցում, թե ինչը պետք է համարել այդ անհատական դետերմինանտը, տարաձայնությունները շատ են: Անձի հոգեբանության տարբեր տեսություններն անձը սահմանում և մեկնաբանում են՝ ելնելով, մի կողմից, մարդու բնույթի հասկացման տարբեր փիլիսոփայական պատկերացումներից, մյուս կողմից՝ այդ նույն անձի ուսումնասիրման համար այս կամ այն մեթոդաբանության կիրառման նպատակահարմարությունից: Այս իրողությունը հանգեցնում է նրան, որ հաճախ դժվարություն է առաջանում անձը սահմանելիս. անձը սահմանելով՝ մենք անդրադառնում ենք կամ անձի կառուցվածքին, կամ նրա ակտիվության գործոններին, կամ փորձում ենք սահմանել անձի դրսևորումները վարքում, կամ նկարագրում ենք անձի գոյության ֆենոմենոլոգիան, կամ էլ դիտարկում ենք անձը նրա հնարավորությունների հեռանկարից:

Գ. Օլպորտն առաջարկում է անձի հոգեբանության առարկան սահմանելիս ելնել «համակարգային պլյուրալիզմի» սկզբունքից, որի նպատակն է «սահմանել անձի կոնցեպցիան, որը չի բացառի իրապես կարևոր բաներ, սակայն միևնույն ժամանակ կպահպանի տրամաբանական հաջորդականության իդեալը» [2, էջ 113]:

Մյուս հարցը, որը բնականոն առաջացել է անձի հոգեբանության զարգացման ընթացքում, այն է, թե որքանով է ունիվերսալ կամ եզակի այդ անհատական չափումը, այլ կերպ ասած՝ որքանով է նման և որքանավ է տարբեր առանձին անհատը մյուսներից: Այստեղ պետք է հիշատակել Ք. Քլակհորնի և Հ. Մյուրեի շատ հայտնի, կարծես ասացվածք դարձած այն դրույթը, որ «ցանկացած մարդ նման է բոլոր այլ մարդկանց, ցանկացած մարդ նման է որոշ այլ մարդկանց, ցանկացած մարդ նման չէ ոչ մեկին» [7, էջ 53]:

Վերոնշյալ խնդրի հետ կապված՝ անձի տեսության զարգացման ընթացքում առանձնացվել են երկու հետազոտական խնդիրներ՝ անհատական առանձնահատկությունների ուսումնասիրություն (տարբեր անհատների միջև համեմատական ուսումնասիրության սկզբունքով), անձի անհատականության ուսումնասիրություն իր յուրատիպության մեջ (անհատի ամբողջականության ուսումնասիրության սկզբունքով): Այս խնդիրները, ունենալով տարբերություններ իրենց մեթոդաբանության ծագման մեջ (նոմոթեթիկ և իդեոգրաֆիկ մոտեցումներ), շարունակեցին բաժանել անձի ուսումնասիրությունների դաշտը երկու որոշ չափով իրար բացառող ավանդույթների՝ հոգեմետրիկ «վերլուծական» և պատմական «մեկնաբանող» [14]: Այս հարցն ավելի մանրամասն քննարկվել է մեր՝ անձի հոգեբանության մեջ մոտեցումների տարաձայնության խնդրին

վերաբերող հոդվածում [3]: Այստեղ նշենք միայն, որ անձի հոգեբանության պատմության մեջ Հ. Մյուրեյը և Գ. Օլպորտը մեծ դեր են խաղացել այս երկու ավանդույթների ինտեգրման ուղղությամբ: Հ. Մյուրեյը, գալով «մեկնաբանող» մոտեցումից, փորձեր է կատարել փորձարարական ճանապարհով ուսումնասիրել հոգեվերլուծական հասկացությունները: Թեպետ անձն իր ամբողջականության մեջ ուսումնասիրելու Հ. Մյուրեյի մեթոդաբանությունը հիմնված էր առանձին դեպքերի վերլուծության վրա՝ նա իր աշխատանքում առանձնացրեց նաև «անձնային փոփոխականներ»՝ որակի անհատական վարիաբիլությունը չափելու համար: Հայտնի են Հ. Մյուրեյի պահանջմունքների դասակարգումը և վերջիններիս չափման մեթոդիկան [13]: Գ. Օլպորտն, իր հերթին, ելնելով «վերլուծական» ավանդույթից, քննադատում է դրանում արտացոլված պոզիտիվիստական ոգուն հատուկ դրույթները՝ նշելով, որ «մարդու գաղտնիքը հնարավոր է բացահայտել ոչ թե նրա *գոյության* պարզագույն ձևերին հանգեցնող վերլուծության, այլ միայն նրա (մարդու) *կայացման* ուղու ամբողջական դիտարկման միջոցով» [2, էջ 447]: Անձնային գծերի ուսումնասիրման փոխարեն Գ. Օլպորտն առաջարկում է *անձնային դիսպոզիցիաներ* հասկացությունը, ինչը թույլ է տալիս դուրս բերել անհատական առանձնահատկություններն անձի կառուցվածքի տարբեր մակարդակներում՝ դրանով իսկ ուսումնասիրելով անձն իր ամբողջականության մեջ [1]:

Փաստորեն, և՛ Գ. Օլպորտը, և՛ Հ. Մյուրեյը, գալով տարբեր հետազոտական ավանդույթներից, հանգում են այն մտքին, որ անձն ունի և՛ ունիվերսալ, և՛ յուրատիպ բնութագրեր, և անձը պետք է ուսումնասիրել ինչպես մյուսներին իր նմանության, այնպես էլ մյուսներից իր տարբերության մեջ:

«Համակարգային պլյուրալիզմի» սկզբունքի կիրառումը

Տասնամյակներ անց Գ. Օլպորտի համակարգային պլյուրալիզմի գաղափարը, կարծես, իր մարմնավորումն է ստանում Դ. ՄաքԱդամսի վերլուծություններում: Իր *«Ինչ մենք գիտենք, երբ գիտենք, թե ինչ է անձը»* հոդվածում Դ. ՄաքԱդամսն առաջարկում է ուսումնասիրել անձը երեք մակարդակում [8]: Համադրելով մինչ այժմ անձն ուսումնասիրող տարբեր մոտեցումները և դրանցում տեղ գտած անձնային կոնստրուկտները[1]՝ Դ. ՄաքԱդամսն առաջարկում է դիտարկել վերջիններս երեք մակարդակով:

[1] Կոնստրուկտները մտացածին հարմար գաղափարներ են, որոնցով կարելի է նկարագրել կամ բացատրել այն, ինչն ուղիղ կերպով հնարավոր չէ չափել [10, էջ 6]: Թեպետ կոնստրուկտները կոնսենսուսի արդյունք են, դրանցից շատերը դառնում են շատ հարմար գաղափարներ իրականութունը նկարագրելու և բացատրելու համար [նույն տեղում, էջ 7]: Օրինակ՝ էքստրավերսիա, կապվածության ոճեր, կյանքի ոճ, ինքնություն և այլն:

Առաջին մակարդակը ներկայացված է ունիվերսալ, սոցիալական համատեքստից անկախ, արտաքին գործոններով չպայմանավորված «անձնային գծերով»: Անձնային առանձնահատկությունների այս մակարդակը թույլ է տալիս ուսումնասիրել անձի համեմատաբար կայուն վարքային *դիսպոզիցիոնալ ձեռագիրը* [նույն տեղում, էջ 372]: Ուսումնասիրելով անձն այս մակարդակում՝ մենք կարող ենք պատասխանել այն հարցին, թե մարդն ընդհանուր առմամբ ինչպես է հակված իրեն դրսևորել իրավիճակների լայն շրջանակում: Դ. ՄաքԱդամսն այս մակարդակում ստացված իմացությունն անվանում է «անձանոթի հոգեբանություն» [նույն տեղում, էջ 371]՝ հավանաբար, նկատի ունենալով, որ անձնային գծերով մենք նկարագրում ենք ընդամենը այդ ունիվերսալ անձնային գծերի անհատական վարիաբիլությունը, սակայն լիարժեք չենք ճանաչում անհատականությանը: Անձնային գծերի վերաբերյալ ուսումնասիրություններն այսօր հիմնականում կենտրոնանում են «Մեծ հնգյակի» շուրջ [5, 6, 11]: Ու. Միշելը, ուսումնասիրելով վարքի կայունության խնդիրն իրավիճակից կախված, նշում է, որ անձնային գծերն ուսումնասիրելիս մենք գործ ունենք անձի կայունության առաջին մակարդակի հետ, ինչը բնութագրում է նմանատիպ վարքի միջին հավանականությունը տարբեր իրավիճակներում [12]:

Դ. ՄաքԱդամսն առաջարկում է երկրորդ մակարդակում ներառել այն անձնային առանձնահատկությունները, որոնք կախված են որոշակի համատեքստից՝ «ժամանակից, տարածությունից և սոցիալական դերերից» [8, էջ 376]: Այս մակարդակին բնորոշ անձնային առանձնահատկությունները Դ. ՄաքԱդամսն անվանում է *անձի մտահոգություններ*: Դրանք ցույց են տալիս, թե «ինչ է ցանկանում մարդը, հաճախ՝ կախված կյանքի տվյալ փուլից կամ գործունեության ոլորտից, և ինչ տեսակի կյանքի ռազմավարություններ են մարդիկ ընտրում, որպեսզի ստանան այն, ինչ ուզում են, կամ խուսափեն ոչ ցանկալի բաներից ժամանակի ընթացքում, որոշակի իրավիճակում, կամ այս կամ այն դերի/կարգավիճակի պահանջներից ելնելով» [նույն տեղում]: Վերջիններս կապված են դրդապատճառային ոլորտի, զարգացման խնդիրների հետ և բնութագրում են անձի վարքային միտումները տարբեր աստիճանի նշանակություն ներկայացնող իրավիճակներում: Այս մակարդակին բնորոշ անձնային կոնստրուկտների օրինակներն են դրդապատճառները, արժեքները, պաշտպանական մեխանիզմները և վարքի քոփինգ ռազմավարությունները, կապվածության ոճերը, անձնային ձգտումները և այլն: Ու. Միշելը նույնպես նշում է, որ անձնային գծերի մակարդակում բավական չէ ուսումնասիրել անձը, քանի որ սխալ կլինի ուսումնասիրել անձն անկախ իրավիճակից, որում նա գործում է. անհրաժեշտ է ներառել իրավիճակը՝ հասկանալու համար

անձի վարքային միտումները: Վարքի կայունության իր վերլուծություններում Ու. Միշելը գալիս է այն եզրահանգման, որ անձնային գծերից զատ՝ անձը կարելի է ուսումնասիրել «եթե..., ապա...» վարքային ձեռագրով, ինչը նշանակում է, որ որոշակի տիպական իրավիճակներում մարդը կդրսևորի տիպական վարքագիծ: Այսպիսի օրինաչափությունը պայմանավորված է նրանով, որ այս կամ այն իրավիճակում ձևավորվում է զգացմունքների, մտածողության և վարքի տիպական և տևական պատերն, ինչը թույլ է տալիս մարդուն գիտակցել և համապատասխան ձևով գործել նմանատիպ իրավիճակում: Անձնային այս դրսևորումը Ու. Միշելը բնութագրում է որպես անձի կայունության երկրորդ մակարդակ [12]:

Թեպետ վերոնշյալ երկու մակարդակների անձնային փոփոխականները թույլ են տալիս բավարար չափով բնութագրել անձը, սակայն դրանք բավարար չեն անձի անհատականության լիարժեք ուսումնասիրման համար: Զարգացման ընթացքում, ներանձնային փորձառության կուտակման հետ, անձը սկսում է գիտակցել իր Ես-ը՝ նույնականացնելով իրեն այդ փորձառության հետ և իմաստավորելով սեփական կյանքը տարբեր ընտրությունների հետ առնչվելիս: Դ. ՄաքԱդամսն ինքնության այս դրսևորումները տեղադրում է երրորդ մակարդակում՝ անվանելով այն կյանքի պատմություն կամ անձնային միֆ: Ըստ Դ. ՄաքԱդամսի՝ ինքնությունը պատմվում է Ես-ի (անձի) կողմից [8, էջ 385], ընդ որում, այն ձևավորվում է պատանեկության տարիքից սկսած: Առանց այս մակարդակի ուսումնասիրության մենք չենք կարողանա հասկանալ անձի ակտիվ բնույթը, այն, թե ինչպես է մարդը գտնում իմաստ և ինչպես է վերիմաստավորում իր կյանքը, հետևաբար՝ վերակառուցում նաև իր ինքնությունը: Դ. ՄաքԱդամսը, ուսումնասիրելով, օրինակ, հասուն տարիքի մարդկանց կյանքի պատմությունները, պարզել է «փրկագործ Ես»-ի (redemptive self) պատմությունը: Վերջինիս դեպքում մարդն իր կյանքի պատմության մեջ շեշտադրում է անբարենպաստ պայմանների հաղթահարումը, սխալներից և մեղքերից ազատումը և կյանքի հանգամանքների դրական փոփոխությունը [9]:

Վերոնշյալ բոլոր երեք մակարդակների անձնային փոփոխականները, ըստ Դ. ՄաքԱդամսի, կոնցեպտուալ և իմացաբանական տեսանկյուններից անկախ են: Այս երեք մակարդակներում գտնվող անձնային փոփոխականներն ունեն բացատրության և ուսումնասիրության իրենց տրամաբանությունը, յուրաքանչյուրը ենթադրում է ուսումնասիրման և չափման իր ուրույն մեթոդը, և յուրաքանչյուրը կարող է նպաստել առանձին տեսությունների զարգացմանը, մոտեցումների, մոդելների ստեղծմանը [8, էջ 387]: Դա նշանակում է, որ թեպետ այդ փոփոխականներն ունեն որոշակի փոխկապվածություն, սակայն սխալ կլինի տեսականորեն

դիտարկել դրանք հիերարխիկ կապի մեջ և հանգեցնել մեկը մյուսին: Այս երեք մակարդակների միջև անձնային փոփոխականների փոխկապվածությունը կարելի է պարզել միայն հետազոտական ճանապարհով՝ հիմնվելով էմպիրիկ փաստերի վրա:

Անձի հոգեբանության դաշտում ուսումնասիրությունների մարտահրավերները

Այս հակիրճ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անհրաժեշտություն է առաջանում մշտապես վերանայել և պարզաբանել ուսումնասիրման առարկան, և անձի հոգեբանության դաշտում՝ մասնավորապես: Այս աշխատանքը կարող է բացել նոր հնարավորություններ և նպաստել անձի ուսումնասիրությունների դաշտում նոր լուծումներ գտնելուն: Որքան բարդ և բազմասպեկտ է մեր ուսումնասիրման առարկան, այդքան ավելի շատ է անհրաժեշտ համեմատել և համակարգել տարբեր ուսումնասիրությունների արդյունքում ստացված անձնային կոնստրուկտները: Այդ պատճառով հոգեբանի մասնագիտական կրթության մեջ անձի հոգեբանության առարկայի բազմակողմանի ընկալումն ավելի է խորացնում նրա մասնագիտական մտածողությունը, երբ նա իր վերլուծությունների ճանապարհին կանգնում է տարբեր տեսությունների և մեթոդաբանությունների խաչմերուկում, ինչը թույլ է տալիս նրան զերծ մնալ տարբեր տեսակի գիտական, իսկ շատ դեպքերում՝ ոչ գիտական գիտակցված կամ չգիտակցված շահարկումներից:

Իսկ որո՞նք են անձի հոգեբանության դաշտում իրականացվող ուսումնասիրությունների հիմնական միտումները: Այս հարցին պատասխանելու համար պետք է դիտարկել, թե ինչ ժամանակակից մարտահրավերների առջև է կանգնած այսօր մարդը: Ժամանակակից մարդու կյանքն ինքնին դարձել է ավելի քիչ կանխատեսելի. գրեթե բոլոր հասարակություններում մշտապես տեղի են ունենում փոխակերպումներ, մեծանում է մարդկանց մոբիլությունը, ընթանում են ժողովրդավարական և ավանդական արժեքների վերիմաստավորումներ և այլն: Այդ պատճառով այսօր մտահոգիչ են անձի կայուն զարգացման, նրա կյանքի որակի խնդիրները, սոցիալական/քաղաքացիական ներգրավվածության և օտարման հարցերը:

Եթե արտապատկերենք այս խնդիրները մեր՝ անձի հոգեբանության դաշտում, ապա, համապատասխանաբար, ավելի մեծ նշանակություն են ստանում, մի կողմից, անձի ավտոնոմիայի, նրա ակտիվ, գործուն (agentic) և գիտակցված վարքին վերաբերող ուսումնասիրությունները, ինչպես նաև անձի ինքնարտահայտման, անհատականության զարգացման,

ինքնության և սուբյեկտիվ փորձառության կարևորման հարցերը: Այս հիմնախնդիրների ուսումնասիրությունների համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայում առավելապես անձի սոցիալ-կոգնիտիվ տեսությունը, էքզիստենցիալ հոգեբանությունը, վերջին ժամանակներում ակտիվորեն զարգացող պոզիտիվ հոգեբանությունը, նարատիվ հոգեբանությունը: Նկատվում է նաև վերոնշյալ խնդիրները սոցիալական և մշակութային գիտությունների հետ միջառարկայական դաշտում ուսումնասիրելու միտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Олпорт, Г.** К вопросу о теории личности. В кн: *Личность в психологии*. Москва, «КСХ+», СПб, «Ювента», 1998, с. 44-60.
2. **Олпорт, Г.** *Становление личности: Избранные труды*. М., Смысл, 2002.
3. **Хачатрян, Н. Г.** Психология личности: разногласия в подходах и опыт интеграции. *Вестник Ереванского гос. университета*, N 136.4, 2012, с. 42-51.
4. **Холл, К., Линсдей, Г.** *Теории личности*, Москва, «КСХ+», 1997.
5. **Goldberg, L. R.** An alternative "description of personality": The big-five factor structure. *Journal of Personality and Social Psychology, 59,* 1990, pp. 1216-1229.
6. **John, O. P.** The "Big Five" factor taxomony: Dimensions of personality in the natural language and in questionnaires, in L. A. Pervin, O. P. John (eds), *Handbook of personality: Theory and research,* New York/London, Guilford Press, 1990, pp. 66-100.
7. **Kluckhohn, C. E., Murray, H. A.** Personality formation: The Determinants, in C. E. Kluckhohn, H. A. Murray and D. M. Schneider (eds), *Personality in nature, society, and culture,* NY: Knopf, 1953, pp. 53-67.
8. **McAdams, D. P.** What do we know when we know a person? *Journal of personality*, 1995, 63, pp. 365-365.
9. **McAdams, D. P.** The redemptive self: Narrative identity in America today. *The self and memory*, 2004, pp. 95-115.
10. **McAdams, D. P., Pals, J. L.** The role of theory in personality research, in W. Robins, R. Fraley, R. Krueger (eds), *Handbook of research methods in personality psychology*, NY/London, The Guilford Press/ 2007, pp. 3-20.
11. **McCrae, R. R., Costa, P. T., JR.** The stability of personality: Observations and evaluations. *Current Directions in Psychological Science,* 3, *1994, pp.* 173-175.
12. **Mischel, W. and Shoda, Y.** A cognitive-affective system theory of personality: reconceptualizing situations, dispositions, dynamics, and invariance in personality structure. *Psychological review*, *102*(2), 1995, pp. 246.
13. **Murray, H.** *Explorations in Personality.* NY: Oxford University Press. Հասանելի է https://archive.org/stream/explorationsinpe031973mbp/explorationsinpe031973mbp_djvu.txt
14. **Winter, D., Barenbaum, N.** History of Modern Personality Theory and Research, in L. A. Pervin, O. P. John (eds), *Handbook of Personality. Theory and Research*, NY/London, The Guilford Press, 1990, pp. 3-27.